

ԲԱՆԱՍՏԵՂԵԱԿԱՆ

ՀԱՐՈՒՏԻ ՈՐԴԻՈՅՆ ՊԱՆԴԻՏՈՒԹԻՒՆԸ

- 48) Մնաս բարով, աղուր Ռայն, որքան երկայն՝
Կըրնայ յօժարիլ ճամբորդն յամենալ,
Քուկդ է տեսարան հոգուց միութեան՝
Կամ խոկմունքին որ մոլորիլ կըրնայ տալ.
Կըրնան մըջտոռոտող անգղերը չ'որսալ՝
Ինքնուրաց սըրտեր, հոս է տեղը որ
Բնութիւն տըխրամած չէ՝ ոչ ալ ուրախ,
Վայրի է, ոչ բիրտ, ահեղ ոչ խոժոռ.
Կարծես երկրի հասուն աշունն է բախտատու.
- 49) Մնաս բարով նորէն - մի զուր մնաս բարով,
Տեսարան մ'ասպիսի մնաս բարով չուգեր,
Միտքս գոյնատուած ամէն գոյներով
Ապա տըժկամակ աչքերն, կը մերժեն,
Միրուն Ռայն, իրենց գգուանքն վրադ պարգել:
Մեկնողի սիրտն գոհ, գովասանքներով
Թ'եւ աւելի շքեղ տեսարանք չողան
Բայց պիտ չ'միանան անոնք իրարմով
Ապշեցնող փայլով, փափուկ գեղով, հին օրերու փառքով:
- 50) Անփութօրէն շատ, ծառերը ծաղկած
Հասուննալ շտապող - ձերմակ քաղքին փայլ,
Անտառներու մէջ պատեր գըրկաբաց,
Թաալող գետակ, խորխորատ մըռայլ,
Վայրի ժայռերը՝ պարիսպի կերպատ
Մարդոց արուեստն հեզնող 'անոր նման
Կարգ մ'ուրիշ ուրախ տեսարաններ նոր
Ամենուն տալու խինդ արգասանդ լման,
Իր եզերքներէն, որպէս յորդող ջուր - թ'եւ կայսրութիւնք իյնան:
- 51) Բայց անոնք կ'իյնան: Վեր են Ալպեաններն:
Պալատներ բնութեան, պատերով լայն, պերճ,
Ճաղատ գագաթնին ցցած ամպերէն վեր.
Գլուխնին մըտահոգ՝ սառ սրահներու մէջ
Վըսեմ սառնարանք ուր կ'շինւին անվերջ
Չիւնամըրրիկներ ու հիւսիսներ ձիւն,
Ինչ որ կ'լայնցնէ հոգին, կ'ահաբեկէ ալ,
Հաաքած շուրջն այս վեհ կատարներուն,
Ցաւցնելով երկրի մուտք երկնի մէջ-վար թողլով մարդուն:

(շարունակելի)

LORD BYRON
Թրգմն. Մուրատ Մանուկեան